



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում (վերլուծություն)

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 155911 գործարք, որոնց քանակը, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 4.0 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված օտարման գործարքների 72.0 %-ը կազմել է առուվաճառքը, 27.3 %-ը՝ նվիրատվությունը և 0.7 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների 37.6 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 5.6 %-ով: 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 11350 առուվաճառքի գործարքների 65.2 %-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.3 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մլն մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	11 ամիս 2015թ.	11 ամիս 2016թ.
<b>Կենտրոն</b>	428000	428100
<b>Արաբկիր</b>	356600	357200
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	282700	283100
<b>Նոր-Նորք</b>	253200	254100
<b>Ավան</b>	260700	261700
<b>Էրեբունի</b>	252000	252350
<b>Շենգավիթ</b>	257100	257700
<b>Դավթաշեն</b>	275900	276700
<b>Աջաինյակ</b>	250100	251000
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	243200	244100
<b>Նուբարաշեն</b>	156700	157350
<b>Միջինը Երևանում</b>	<b>274200</b>	<b>274900</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մլն մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.3 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 3410 բնակարան, որոնց քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.4 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մլն մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		11 ամիս 2015թ.	11 ամիս 2016թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116100
	Աստրան	57800	58500
	Թալին	66100	66800
Արարատ	Արտաշատ	97800	98800
	Մալիս	115800	115800
	Վեդի	101300	101700
	Արարատ	76500	77500
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200
	Արմավիր	121200	121200
	Մեծամոր	87500	87600
Գեղարքունիք	Սևան	99300	99400
	Գալառ	60100	60600
	Մարտունի	107700	107700
	Վարդենիս	44900	45300
	Ճամբարակ	28700	28800
Լոռի	Վանաձոր	88500	88600
	Ստեփանավան	74600	74800
	Սպիտակ	99800	99900
	Ալալերդի	55200	55800
	Տաշիր	47300	47400
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ապալա	20400	20500
	Աբովյան	155100	155100
Կոտայք	Նոր Զան	128550	128550
	Բյուրեղավան	108200	108200
	Եղվարդ	109400	109800
	Հրազդան	63800	63900
	Ճաղկաձոր	292400	292400
	Չարենցավան	85500	85500
	Գյումրի	109200	109400
Շիրակ	Արթիկ	66800	67300
	Մարալիկ	40800	41100
	Գորիս	123000	123700
Սյունիք	Կապան	93900	95100
	Սիսիան	91900	92200
	Մեղրի	81900	83100
	Ագարակ	47200	47700
	Քաջարան	94600	94900
	Դատակերտ	8000	8000
	Վայոց ձոր	Վայք	95000
Եղեգնաձոր	125600	126200	
Ջերմուկ	112900	113200	
Տավուշ	Դիլիջան	114200	115500
	Իջևան	118400	118550
	Բերդ	60200	60450
	Նոյեմբերյան	50000	50400
	Այրում	31850	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունները թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաթիվ արտադրանքների բնակարանների, 1 մեջ մակերեսի

հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատածել են 0.3 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության արձանագրվել է անհատական բնակելի տների 3822 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1113, մարզերում՝ 2709: 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.4 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 1.6 %-ով, իսկ մարզերում՝ աճել 0.04 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մձև և տնամերձի 400.0 մձև միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մձև մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	11 ամիս 2015թ.	11 ամիս 2016թ.
<b>Կենտրոն</b>	476100	476200
<b>Արաբկիր</b>	383000	383100
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	295000	295000
<b>Նորք-Մարաշ</b>	319200	319300
<b>Ավան</b>	270500	270600
<b>Էրեբունի</b>	239750	239800
<b>Շենգավիթ</b>	255000	255000
<b>Դավթաշեն</b>	276000	276100
<b>Աջաինյակ</b>	250050	250100
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	238000	238100
<b>Նուբարաշեն</b>	150800	150800
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>286700</b>	<b>286700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մձև մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատմնացել են անփոփոխ:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մձև և տնամերձի 1000.0 մձև միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մձև մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		11 ամիս 2015թ.	11 ամիս 2016թ.
<b>Արագածոտն</b>	<b>Աշտարակ</b>	136200	136200

	Ապրան	60050	60050
	Թային	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100100
	Մախիս	115100	115100
	Վեդի	102300	102300
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100
	Արմավիր	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950
	Գավառ	57100	57100
	Մարտունի	96100	96200
	Վարդենիս	41000	41100
	Ճամբարակ	31100	31100
Լոռի	Վանաձոր	100300	100900
	Ստեփանավան	90600	91200
	Սպիտակ	114000	114000
	Ալալերդի	50200	50300
	Տաշիր	51900	51900
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
Կոտայք	Աբովյան	157100	157300
	Նոր Զաճն	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500
	Եղվարդ	116100	116100
	Հրազդան	82600	82600
	Ճաղկաձոր	305000	305000
	Չարենցավան	83000	83000
	Գյումրի	118800	119300
Շիրակ	Արթիկ	63100	63400
	Մարալիկ	52000	52000
	Գորիս	130000	130000
Սյունիք	Կապան	100300	100700
	Սիսիան	96500	96500
	Մեղրի	84500	84600
	Ագարակ	46900	46900
	Դաստակերտ	11610	11610
	Վայք	90100	90150
Վայոց ձոր	Եղեգնաձոր	116600	116750
	Ջերմուկ	131300	131300
	Դիլիջան	114200	115600
Տավուշ	Իջևան	123200	123200
	Բերդ	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրուժ	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինություն 1 մ<sup>2</sup> ակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատածել են 0.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել է 14992 միավոր (7618.88 հա) հող, որից Երևանում՝ 926 միավոր (96.26 հա): Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 8849 միավոր (6998.09 հա), որից երևանում՝ 51 միավոր (13.00 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 4235 միավոր (373.12 հա), որից երևանում՝ 475 միավոր (22.45 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1395 միավոր (148.97 հա), որից երևանում՝ 366 միավոր (50.07 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 159 միավոր (63.72 հա), որից երևանում՝ 32 միավոր (5.35 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 66 միավոր (24.01 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 274 միավոր (10.66 հա), որից երևանում՝ 2 միավոր (1.39 հա),
- ջրային հող՝ 14 միավոր (0.31 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 12036 միավորի (6239.63 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից երևանում՝ 695 միավոր (70.90 հա), նվիրատվության գործարք՝ 2822 միավոր (1336.87 հա), որից երևանում՝ 163 միավոր (16.92 հա) և փոխանակության գործարք՝ 134 միավոր (42.38 հա), որից երևանում՝ 68 միավոր (8.44 հա):

Հանրապետությունում 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.5 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.5 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 5.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 3.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 1222.17 հա, որից 1197.15 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.9 %-ը կամ 2998 միավորը (1224.99 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից երևանում՝ 228 միավոր (9.45 հա), իսկ 74.4 %-ը կամ 8952 միավորը (4484.42 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից երևանում՝ 460 միավոր (61.26 հա): 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 86 գործարք (530.22 հա), այդ թվում՝ նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	9	0.92	93	3.68	126	4.85	34	9.33	22	4.42	262	15.07	141	31.05
Արագածոտն	218	192.43	9	0.61	32	0.93	80	3.57	585	498.68	2	0.01	211	42.09	9	0.69
Արարատ	169	232.32	6	1.08	130	7.09	45	2.46	813	523.21	4	4.05	387	34.39	42	1.07
Արմավիր	51	58.19	7	0.79	10	0.24	22	0.34	786	775.01	6	1.37	457	45.03	28	0.78
Գեղարքունիք	41	85.06	12	10.65	37	2.80	133	15.94	367	229.67	7	0.59	245	28.55	19	2.24
Լոռի	20	14.24	11	0.75	61	1.21	69	6.01	1346	662.95	4	0.24	79	7.04	37	5.63
Կոտայք	174	242.61	5	5.85	339	10.11	94	3.73	956	666.98	5	1.73	540	44.96	68	12.23
Շիրակ	135	43.56	4	3.55	50	2.98	60	3.18	408	320.03	5	0.41	79	8.32	25	1.44
Սյունիք	76	78.31	12	1.94	52	2.01	24	4.17	385	267.73	0	0.00	111	9.29	25	0.92
Վայոց ձոր	101	104.78	0	0.00	9	0.35	19	0.30	208	153.13	0	0.00	39	4.41	15	0.38
Տավուշ	43	54.40	7	1.39	63	4.32	58	1.49	87	52.28	5	0.39	59	4.90	12	1.04
Ընդամենը	1028	1105.9	82	27.53	876	35.72	730	46.04	5975	4159.00	60	13.21	2469	244.05	421	57.47

Ստորև ներկայացվում է 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Միավոր	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	127	3.62	8	0.91	66	1.42	53	1.29	101	5.83	0	0.00	1	0.01	27	2.26	73	3.56
Արագածոտն	41	2.02	0	0.00	4	0.26	37	1.76	198	160.17	118	157.08	9	0.61	28	0.67	43	1.81
Արարատ	13	0.26	0	0.00	7	0.21	6	0.05	333	232.65	165	222.28	6	1.08	123	6.88	39	2.41
Արմավիր	12	0.26	0	0.00	5	0.06	7	0.20	77	58.82	50	57.72	7	0.79	5	0.18	15	0.13
Գեղարքունիք	40	10.77	3	9.68	11	0.52	26	0.57	183	103.69	41	85.06	9	0.97	26	2.29	107	15.37
Լոռի	44	0.33	0	0.00	23	0.17	21	0.16	117	21.88	20	14.24	11	0.75	38	1.04	48	5.85
Կոտայք	188	1.43	0	0.00	182	1.04	6	0.39	422	259.20	172	240.93	5	5.85	157	9.07	88	3.35
Շիրակ	70	5.51	2	0.38	22	2.17	46	2.96	54	16.79	10	12.60	2	3.17	28	0.81	14	0.21
Սյունիք	32	0.55	1	0.03	24	0.11	7	0.41	126	84.32	70	76.76	11	1.91	28	1.90	17	3.75
Վայոց ձոր	7	0.11	0	0.00	1	0.03	6	0.08	122	105.32	101	104.78	0	0.00	8	0.32	13	0.22
Տավուշ	18	0.57	0	0.00	12	0.47	6	0.10	150	60.31	40	53.67	7	1.39	51	3.85	52	1.40
Ընդամենը	592	25.43	14	11.00	357	6.46	221	7.97	1883	1108.98	787	1025.12	68	16.53	519	29.27	509	38.06

Հանրապետությունում 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության

հողերի ուղղակի վաճառքի 241 գործարք (80.77 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 5.6 %-ով: Ընդ որում, երևանում նվազել է 15.1 %-ով, իսկ մարզերում՝ 5.0 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 9.6 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 18.3 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 12.1 %-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ՝ 11.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մավերես (հա)	պայմանագրային գները՝ 1 համակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մավերես (հա)	շուկայական գները՝ 1 համակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	93	116.12	40.3	4498.3	426.7	317	246.86	365.0	12000.0	3436.1
Ապարան	4	1.66	70.1	3743.3	1006.0	23	10.89	86.5	2727.3	633.8
Թալին	18	38.91	37.9	450.0	191.4	179	121.22	93.6	5494.5	747.1
Ծաղկահովիտ	3	0.38	517.8	3410.5	1965.3	59	118.72	79.5	1000.0	390.6
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	77	39.96	68.4	36316.8	1636.2	343	133.95	335.1	10833.3	2698.5
Մաախ	22	57.86	59.5	1866.4	422.2	183	99.74	200.0	11904.8	3287.6
Վեդի	66	124.46	45.0	18333.3	470.3	265	281.67	207.0	10795.1	1976.9
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	6	4.23	63.0	1058.4	397.5	355	243.95	294.3	9090.0	1356.8
Բաղրամյան	13	11.82	70.9	1478.9	163.4	122	356.55	90.6	2561.1	911.0
Վարդշապատ	31	41.67	29.0	1682.5	236.7	284	160.97	444.4	11764.7	1964.3
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	11	19.15	163.5	4900.0	1343.4	233	69.33	199.8	1875.0	501.7
Ճամբարակ	1	7.00	168.7	168.7	168.7	8	2.70	60.5	953.3	351.5
Մարտունի	5	4.39	17.8	381.1	80.9	35	8.04	51.1	2850.0	779.1
Սևան	11	10.32	180.0	1221.0	631.6	29	17.13	52.2	2134.8	355.0
Վարդենիս	13	44.20	115.4	885.6	363.0	62	132.48	41.2	2575.1	394.6
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	9	1.53	670.7	2561.8	1943.3	59	32.94	170.4	6424.2	566.0
Գուգարք	5	3.06	170.0	1456.2	633.7	59	17.45	234.6	6065.9	814.0
Սպիտակ						14	3.96	250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	1.02	123.9	123.9	123.9	58	44.67	90.6	1686.6	413.0
Տաշիր	5	8.63	168.1	552.0	357.7	1131	533.35	45.3	1384.4	185.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	89	139.82	68.5	5833.3	648.2	229	197.20	279.3	11942.7	3981.7
Եղվարդ	61	84.42	44.6	5712.6	437.6	594	396.07	174.4	11971.8	2532.9
Հրազդան	22	16.69	85.4	1108.0	372.2	111	61.52	130.5	10256.4	1006.6
<b>Ճիրակի մարզ</b>										
Ախուրյան	4	8.47	103.5	514.7	273.5	130	106.78	252.0	1693.1	657.8
Ամասիա	1	1.08	295.3	295.3	295.3	11	19.86	40.9	261.0	137.8
Անի	2	1.28	93.0	294.7	193.9	136	99.04	110.6	546.9	456.3
Աշոցք						15	11.00	58.5	215.8	138.6
Արթիկ	3	1.77	726.1	828.0	785.5	111	81.88	79.4	1428.6	520.9
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	2	0.86	162.8	1000.0	581.4	50	51.14	92.6	1023.2	774.9
Կապան	15	12.95	77.0	931.9	301.5	137	79.03	120.0	841.6	441.7
Մեղրի	49	61.43	37.1	1246.3	324.3	81	26.84	193.0	3000.0	802.6
Սիսիան	4	1.52	133.9	1550.0	608.0	116	110.58	46.3	1977.4	582.5
<b>Վայոց ձորի մարզ</b>										



Եղեգնաճոր	60	64.64	21.7	1156.4	240.5	124	79.14	125.0	10000.0	1755.2
Վայք	41	40.14	16.7	704.0	161.1	84	74.00	58.8	1430.7	600.2
Տավուշի մարզ										
Բերդ						40	12.38	213.3	3783.8	688.6
Իջևան	29	52.07	144.3	3240.0	1252.8	29	28.79	267.5	9454.5	1528.3
Նոյեմբերյան	11	1.60	150.5	5806.9	2434.3	18	11.12	46.7	7368.4	982.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ անուրիով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	22	3847.1	421.7	5714.3	3666.0	152	324994.5	130.7	22200.0	2590.9
Ապարան	4	1312.2	122.1	553.0	358.0	27	34932.5	124.1	609.6	389.7
Թալին	2	1537.0	77.4	292.5	185.0	22	33402.3	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						10	27526.0	60.0	214.3	93.8
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	34	29441.6	253.3	6068.5	830.5	108	121435.0	173.9	7140.3	905.4
Մասիս	53	21195.9	535.3	4011.4	2673.0	200	138039.5	187.5	25000.0	1207.7
Վեդի	36	18145.3	664.3	3000.0	962.7	74	79517.6	126.1	5000.0	664.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	3	840.4	555.0	3528.0	2784.7	166	174364.1	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						13	16236.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	984.0	554.9	1304.0	929.5	267	245150.0	197.4	26528.4	1530.2
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	3	6679.0	192.5	850.5	521.5	28	28615.1	186.6	1084.3	683.7
Ճամբարակ						7	4679.0	71.3	2286.2	146.9
Մարտունի	9	7274.0	112.6	404.9	241.2	178	197922.7	119.3	5000.0	281.3
Սևան	10	2739.1	410.5	1805.7	1173.1	10	11034.9	240.0	3110.4	341.6
Վարդենիս	4	6179.3	38.5	1200.0	609.6	22	43277.0	72.5	987.2	150.6
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	17	2755.0	225.0	3337.0	1982.0	29	28645.6	114.3	1388.9	217.0
Գուգարք	17	4910.3	197.5	5843.3	2308.5	24	16626.9	77.9	14083.3	1259.6
Սպիտակ	1	605.1	736.2	736.2	736.2	9	10150.0	104.9	1348.3	199.8
Ստեփանավան	1	1177.6	173.2	173.2	173.2	13	11894.9	88.2	1666.7	175.6
Տաշիր	2	942.7	316.5	400.0	358.3	2	2000.0	45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Արովյան	113	56063.4	352.9	5672.6	3454.2	247	195376.7	264.5	35353.5	1952.3
Եղվարդ	33	31380.5	204.2	4976.4	1863.1	241	206172.4	173.6	27000.0	2856.1
Հրազդան	11	3231.6	278.3	3904.8	2248.4	46	42378.0	117.7	34848.5	1318.3
<b>Ճիրակի մարզ</b>										
Ախուրյան	14	4650.8	244.9	10500.0	4314.4	27	25628.5	113.6	18750.0	333.7
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	4	1231.5	443.7	1797.8	792.9	22	35481.0	67.9	180.6	209.7
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	10	2172.0	580.8	3392.9	2317.7	27	21612.3	111.8	5000.0	217.9
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	4	1939.0	230.0	230.0	230.0	16	15182.0	112.2	1700.0	366.8
Կապան	14	9355.0	110.4	2600.0	1344.0	11	10400.5	67.9	2638.9	357.5
Մեղրի	7	5713.1	100.8	607.4	305.8	22	17500.4	68.5	632.9	269.8
Սիսիան	3	2000.0	554.4	580.8	572.0	62	49791.9	123.5	875.0	253.6
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաճոր	4	3057.7	244.3	1655.9	722.4	34	40070.0	96.7	7659.6	506.9
Վայք	4	174.3	1050.0	1068.7	1054.7	5	3996.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										

Բերդ						4	2755.4	75.8	810.0	126.4
Իջևան	23	11605.1	159.5	3000.0	1501.9	48	40493.5	74.1	14423.1	511.9
Նոյեմբերյան	28	26863.7	110.0	1100.4	568.5	6	4718.2	125.0	1948.1	253.0

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6910 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.4 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 65.8 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքի քանակն աճել է 8.9 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության նույն գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 428 բնակարանի, 568 անհատական բնակելի տան, 3286 հասարակական, 697 արտադրական նշանակության օբյեկտի, 1799 միավոր հողի, 129 ավտոտնակի և 3 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 54 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 26.0 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության նույն վարձակալված 6132.28 հա հողերից 9.78 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 6122.50 հա հողերից 5850.15 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 149.06 հա արդյունաբերական օբյեկտների, 3.15 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 1877.81 հա, որից 1866.60 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 18490 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.9 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 19.8 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (49.6 %), առանձնատների (21.2 %). հասարակական նշանակության օբյեկտների (10.9 %) և հողերի (13.1 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9707 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 12.7 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության նույն գրավադրվել է 9544.63 հա մակերեսով հող, որից 47.57 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 4759.95 հա կամ 49.9 %-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 3.35 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 3328.09 հա, որից 3321.64 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության նույն իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1534 գործարք, որից 1039-ը՝ Երևանում: 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների

քանակը աճել է 18.1 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 13.2 %-ով, իսկ մարզերում՝ 29.9 %-ով:

2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետության արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 19680 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.3 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.6 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (23.4 %):

### **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**